

ՀԱՆՐԱՊԵՏԱԿ

ԼՐԱԳԻՐ

Ազգային, Գրական եւ Քաղաքական

ԽՄԲԱԳԻՐ — ՏԵՕՐԷՆ

ԲԻԻԶԱՆԴ Մ. ՊՕԶԱՃԵԱՆ

Գ. Շրջան

1900 Մայիս 6

Թիւ 94 — ԽԱ

هانراکيداق غزنه‌سى

HANRAKIDAGUE

Journal Arménien Encyclopédique

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Տարեկան Պոլսոյ համար	50 Լր.
Գաւառաց համար	60 ,
Արտասահման	15 Զր.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Մրցման ոգին
Խղճմանքին դիմաց (Նորավայ)
Իմաստասիրական բառարան
Մովիկա
Տես՝ եւ գործ. Մանկավարժութիւն
Յուշ (Մրտի էջեր)
Բնութիւնն ու Կիներ (Բերքուած)
Զգայնիկ (Գիտական)
Ամուսնալոյծն՝ ապերջանիկ

Բ. Պ.
Թէոդորիկ
Ա. Լ.
ՍՍԱԿԱՆ ՎՐԴ.
Մ.
Մ. ԻՍՊԻՐԵԱՆ
Մ. ԹԱՊԱԳԵԱՆ

* * *

40 փաթա 40

ՀԱՆՐԱՊԵՏԱԿ կը ծախուի. 1. Գաւառացի, Արմեն ԷՅ. Զպուգնեանի Դեղարանը. — 2. Սա-
մաթիա, Կայարանին մօտ, ծխականաւ Յարութիւն Աղա Էթերհանեանի խանութը. — 3. Կա-
մուրջի գլուխը, ջրավաճառ Նեան աղա Օգանեանի բով (ճախկին ջրավաճառ Պօղոս ա-
ղայի խանութը). — 4. Զրավաճառ Սեփան աղայի խանութը. — 5. Մարգարեան, Պալենց,
Աւենեան եւ Զարգարեան գրատուններ. — 6. Բոլոր լրագրավաճառներուն բով:
Գաւառներէ ո՛վ որ կը փափաքի ՀԱՆՐԱՊԵՏԱԿի գործակալութիւնն ստանձնել, կրնայ
ուղղակի Տնօրէնութեան դիմել:

ԿՈՆՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ն. ՊԵՐՊԵՐԵԱՆ

Էսկի Զապիէ հասցեսի Թիւ 61

1900

Է Ք Ի Թ Ա Պ Լ

(ՄԻԱՅԵԱԼ ՆԱՀԱՆԳԱՅ)

ԱՇԽԱՐՀԻՍ ԱՄԵՆԷՆ ՀԱՐՈՒՍՏ ԵՒ ԱՄԵՆԷՆ ՀԶՕՐ

ԿԵԱՆՔԻ ԱՊԱՅՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ

ԵՐԱՇԽԱՒՈՐՈՒԹԵԱՆ ԴՐԱՄԱԳԼՈՒԽ ՄԷԿ ՄԻԼԻԱՌ 451 ՄԻԼԻՈՆ ԶՐԱՆԲ



1898ին՝ ԷՔԻԹԱՊԼ իր ապաշուկագրեալներուն բաժնած է աւելի քան 15³/₄ ՄԻԼԻՈՆ ֆրանք շահաբաժին

[Այսինքն նոյն տարուոյ մէջ Ֆրանսական ՄԻԱՅԵԱԼ 17 ընկերութեանց բաժնած շահերու համագումարին գրեթէ կրկինը]:

Ախարհիս մէջ գտնուող ոչ մէկ ընկերութիւն

ԷՔԻԹԱՊԼի չափ գործառնութիւն ունի

ԷՔԻԹԱՊԼի չափ պահեստի դրամ ունի

ԷՔԻԹԱՊԼի չափ շահաբաժին կը վճարէ

Հետեւաբար ոչ մէկ ընկերութիւն կրնայ աւելի ԱԺԱՆ եւ աւելի ՇԱՀԱՒԷՏ ընծայել կեանքի ապաշուկագրութիւնը՝ որքան ԷՔԻԹԱՊԼ:

ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՍԵՂԱՆԱՒՈՐՔ

Լոնտոն

Անգղիոյ պանքա

Բարիզ եւ Կ. Պոլիս, Գրեաթի Լիոնէ

ՆԵՐԿԱՅԱՅՈՒՅՑԻՉ ԹՈՒՐԿԻՈՅ

ԳԱՌՆԻԿ ԱՍՏՈՒԱԾԱՏՈՐ

Կ. Պոլիս, Պահճէ Գաբու, Անանիատի Խան

Պատկերազարդ Աշխարհագրութիւն

ՊՕԶԱՃԵԱՆ

Գին 4 դրու

Լոյս տեսաւ Ն. Պերպերեան մաքուր սպագրութեամբ, քաղ. վերջին փոփոխութեանց եւ Կրթական ծրագրին համաձայն: Մայրաքաղաքիս Է՛ն կարեւոր դպրոցներն անմիջապէս ընդունեցին զայն իրենց դասագրոց ցանկին մէջ:

Փետրեմբեր 1900ի սպագրութեամբ, որ 208 էջերէ կը բաղկանայ, եւ իր պարունակած պատմական, գիտական, առեւտրական եւ ցեղային ծանօթութիւններով, աշխարհագրութեան Ա. դասագիրքը կը հանդիսանայ եւ արժանի է ամէն ուսուցչի ու շատրուքեան:

Հանրագիտակի Տեղեկութիւնը կը հայրայրէ մեծաքանակ 30 առ 100 զեղչով:

ՄԵԾ ՄԹԵՐԱՆՈՑ ԴԵՂՕՐԷԻՑ

Կրէկուառ Ղազարօս եւ Ընկ.

Պատիւ ունինք ծանուցանել քե վաճառատնս փոխադրուած է Սասքգի Խան քիւ 1 եւ 2: Եւրոպիոյ բոլոր կեդրոններուն հետ իր ոչնեցած յարաբերութեանց շնորհիւ, բարձր դերու անհուն պէսպիսութիւն մը միշտ պատրաստ ունի մեծաքանակ, ինչպէս նաեւ տեղեւորական համբաւ վայելող եւրոպացի բժիշկներու մասնագիտական պատրաստ դեղերը ու ամէն տեսակ հանգային ջուրերը: Գաւառներէ եղած յանձնարարութիւնք մեղիւ ու փութով կը կատարուին, անմրցելի կերպիւ ածան գներով:

Դիմեցե՛ք եւ պիտի համոզուիք:

ՀԱՆՐԱԳԻՏԱԿ

ԼՐԱԳԻՐ

Ազգային Գրական և Քաղաքական



ՄԱՐԱԳԻՐ - ՏՆՕՐԷՆ

ԲԻԻԶԱՆԿ Մ. ՊՕԶԱՃԵԱՆ

Գ. Շրջան

1900 Մայիս 6

Թիւ 94 — ԻԱ

ՄՐՑՄԱՆ ՈԳԻՆ



Ա

ՐԱԲԱԿԱՆ Տարեգրէ-
խուն առթիւ, թուրք
մամուլն ընդհարձակ
սիւնակներ նուիրեց

երկրին երմտական եւ տնտեսական կա-
ցութեան, ի վեր հանելով անոր բարգա-
ւաճ վիճակը: Վեհ. Սուլթանին Գահա-
կալութենէն ի վեր, քսան եւ հինգ տար-
ուան մէջ, երկիրն իր հանրային պարտ-
քէն պակսեցուցած է 20 միլիոն ոսկիէն
աւելի գումար մը, եւ ուրիշ 20 միլիոն
ոսկւոյ գումար մ'ալ յատկացուցած է
կարգ մը հանրագումար շինութեանց, ա-
ռանց արտաքին փոխառութեան գիմե-
լու: Վեց անուղղակի արոց վարչութեան
հասոյթները, որք հանրային պարտուց
վճարման սահմանուած են, իմաստուն

տնտեսութեամբ կ'աւելնան տարուէ տա-
րի: Ահա այս ոճով կը խօսէր թուրք մա-
մուլը, եւ տէրութեան հասոյթներուն
աճումը կը նկատէր իբրեւ արդիւնք հան-
րային հարստութեան յաւելման: Հան-
րային հարստութիւնը ցորչափ աւելնոյ,
տէրութեան հասոյթք ալ բնականաբար
նոյն համեմատութեամբ կ'աւելնան,
տնտեսագիտական ճշմարիտ սկզբունք
մը, որ մեր թուրք պաշտօնակիցներուն
ուշադրութիւնն սկսած է գրաւել:

Արդարեւ, ժամանակէ մ'ի վեր,
թուրք մամուլն իր լայն էջերուն մէջ
կարեւոր ու արժանի տեղ մը սահմա-
նած է սա՛ կենսական խնդրոյն թէ ի՞նչ
միջոցներով կարելի է աւելցնել թուրքիոյ
հանրային հարստութիւնը: Այս մասին
թերուղէմ յայտնուած կարծիքներուն
մէջ, ողջամիտ գաղափարներ ի
յայտ կուգան, զորս կ'արժէ մատնանիշ
ընել: Իդտամ բնիկ վաճառականու-
թիւնը քաջալերելու եւ զարգացնելու
առաջ հարկին վրայ կարգ մը շահեկան
յօդուածներ հրատարակած էր արդէն:
Մայիսամսի վերջին թիւերէն մէկուն
մէջ, «Արտեստական կրթութեան պէտ-

քը՝ խորագրին տակ հրատարակուած ուշագրաւ յօդուած մը, զոր իզմիրցի թուրք վաճառական մը գրած է, կը ջատագովէ ազատ վաճառականութեան սկզբունքը, մենաշնորհի (μονοπωλή, Monopole) դրութիւնը խտիւ կը դատապարտէ իբրեւ խափանարար՝ բնիկ վաճառականութեան ու ճարտարագործութեան զարգացման, եւ հանրային հարստութեան յաւելման միակ միջոցը կը համարի առեւտրական մրցումը, հոգի՛ն վաճառականութեան։ Գովելի է թուրք վաճառականի մը բերնէն լսել այսպիսի ճշմարտութիւններ, որք ասկէ 30—40 տարի առաջ անտես կ'առնուէին սակայն։

Հանրօգուտ շինութիւններ ի գլուխ հանելու համար տրուած մենաշնորհի մը քիչ չատ օգտակարութիւնը կ'ըմբռնենք, բայց առեւտրական ո եւ է ձեռնարկի մը, գործարանի մը համար տրուած մենաշնորհի մը հանրային օգտակարութիւնը չենք կարող ըմբռնել, վասն զի այդպիսի մենաշնորհ մը սահմանուած է սպաննելու թէ՛ ազատ վաճառականութիւնը, թէ՛ աբուեստից զարգացումը եւ թէ՛ յառաջդիմութեան ոգին։ Սակայն այս բացայայտ ճշմարտութեան հակառակ, ամէն օր զարմացմամբ կը կարդանք ու կը լսենք թէ այսինչ կամ այնինչ դրամատէրն ֆէսի կամ շաքարի գործարան մը հաստատելու համար մենաշնորհ (μονοπωλή) խնդրած է (եւ ոչ թէ արտօնութիւն, բոլսսաք)։ Բսել է թէ այդ դրամատէրն իր շահը մենաշնորհի դրութեան մէջ միայն կը փնտռէ, եւ ո՛չ թէ առեւտրական մրցման մէջ։ Դեռ չէ մոռցուած թէ Աւստրիոյ ֆէսի գործարանք իրենց միջեւ սկսուած խօլ մրցումը բառնալու համար, միութիւն մը կազմած եւ իրենց գիները բարձրացուցած էին այսչափ առհարիւր։ Այս միութիւնն, որ նոյն գործարաններու մէկ կենսական պէտ-

քէն ծագում առած էր թերեւս, եկաւ յիշեցնել մեզ թէ մեր կարմիր գդակներն օտարէն գնելու հարկին տակ կը գտնուէինք։ Մինչեւ այն ատեն մեր մտքէն անցած էր այդպիսի բան մը։ Եւ ահա տեղական մամուլ մէջ սկսաւ իրարանցում մը, եւ կարգ մը դրամատէրներ առիթէն օգուտ քաղել ուզելով, ֆէսի գործարան հաստատելու գաղափարը երկնեցին, բայց փոխանակ պարզ արտօնութիւն մը խնդրելու, որ պիտի տրուէր անշուշտ, մեցաւեմո՛րն խնդրեցին, այսինքն այն փորձանքն որուն դէմ կը գանգատէին, մեր գլխուն փորձել կ'ուզէին։ Սակայն Կայս. Կառավարութիւնը, գովելի իմաստութեամբ, խապառմերեց մենաշնորհի առաջարկը, վասն զի առեւտրական ու շահագիտական ձեռնարկներու համար մենաշնորհ տալու միջինդարեան դրութիւնն արգելք մ'է արուեստներու ազատ զարգացման։ Ինչ պիտի ըսէիք, եթէ կարգ մը դրամատէրներ պահանջէին գորգագործութիւնը(*) մենաշնորհի վե-

(*) Այս չարթուան Պաշտօնական լուրերու չարքին մէջ գոհութեամբ կարդացինք թէ Վեհ. Սուլթանը, իբրեւ վերին պաշտպան բնիկ ճարտարագործութեան, բարեհաճած է Սալիսէի աստիճան շնորհել գորգի առաջնակարգ վաճառական Զարմայր Էֆէնտի ճշմարտախօսի, ինչպէս նաեւ «Սիրաքեան, ճշմարտախօս եւ Ընկ.» վաճառատան տնօրէն Իսմայիլ Հազգը Էֆ.ի, ի վարձ այն գովելի ծառայութեանց զորս մատուցած են ու կը մատուցանեն գորգագործութեան օգտաւատ արուեստին։ Արժանաւոր վարձատրութիւն արդարեւ։

Զարմայր Էֆ. ճշմարտախօս գորգագործութեան արուեստին մէջ հեղինակութիւն մ'է այսօր իր Ձեռնայ բեղուն փորձառութեամբ, թէեւ ինք տակաւին բաղդատաբար երիտասարդ։ Իր բնածիր բարեմասնութեանց և ուղղախօս աշխատասիրութեան շնորհիւ, կանուխէն յաջողած է արժանայարգ

րածել կամ ուրիշներ առաջարկէին նոյն գրութեանսակ առնել եազմանիութիւնը: Պիտի խնդայիք անոնց վրայ, այնպէս չէ՝ նոյն բանը պէտք է ընել ֆէսի գործարան հիմնելու մեծագործ խնդրողներուն համար ալ: Լրագրական իրարանցումը, յարգի բոցի պէս, մարեցաւ անցաւ, ու մենք դարձեալ շարունակեցինք գնել օտարէն մեր կարմիր գդակները:

Մենաշնորհի գրութիւնը ժամանակաւ Ֆրանսայի մէջ ընդունուած գրութիւն մ'էր, եւ բնիկ ճարտարագործութիւնը սահմանափակ ու ողորմելի կացութեան մէջ կը գտնուէր: Բայց ի վերջոյ, լուսամիտ տնտեսագէտներու շնորհիւ, վերցաւ այս խափանարար գրութիւն, եւ գործարանք բազմապատկուեցան: Արուեստներն ազատ թռիչ մ'առին, առեւտրական մրցման ոգին հրաշալիքներ արտադրեց, եւ միայն Լիօնի մէջ 70,000 կարկահներ ոկսան մետաքսեայ հրաշագան գիպակներ արտադրել, երկրին արտածութիւնն զգալապէս աւելցաւ եւ օտարին ոսկին սկսաւ Ֆրանսա թափիլ:

Հանրային հարստութեան բարգաւաճումը կախում ունի առեւտրական մրցման ոգիէն, եւ այս ոգին ցորչափ

դիրք մը գրաւել Պոլսոյ եւ Եւրոպական հրապարակներուն վրայ: Իր փորձառութիւն եւ ուղղամտութիւն սիրելի ընծայած են զինքը նաեւ բարձրագոյն շրջանակներու մէջ, Կայս. Անձնական Գանձուն նախորդ նախարար հանգուցեալ Բորդուգալ Միքայէլ փաշայի օրով, երկիցս ի պաշտօնէ այցելած է Հէրէքէի Կայս. Գործարանը, եւ գորագործութեան ճիւղին բարգաւաճման միջոցները ծրագրած է: Որչափ ճարտար վաճառական, նոյնչափ հմուտ գեղասէր մ'է (amateur):

Իսմայիլ Հագգը պէյ եւս, որ վերջերս Համազգային Անկեղանոցի մէջ հաստատուած գորգագործութեան ճիւղին պատուակալ Տնօրէն անուանուած էր, գորգագործութեան բնիկ արուեստին զարգացման եռանդուն աշխատող մ'է:

Գոյութիւն չունենայ, ո'չ արուեստը կըրնան զարգանալ եւ ո'չ վաճառականութիւնը, որովհետեւ ակներեւ ճշմարտութիւն մ'է թէ այս երկուքն անբաժան են, եւ մին չկրնար գոյութիւն ունենալ առանց միւսին: Հին աւանդամոլ գրութիւնն արուեստները կը թողու իրենց նախնական վիճակին մէջ, եւ միայն առեւտրական մրցումն է որ կը մղէ արուեստագէտը դէպի յառաջդիմութեան ուղին: Ուստի գովելի է Կայս. Կառավարութեան ընթացքն, երբ կը մերժէ խնդրուած այն մենաշնորհները որոց նպատակն է յառաջդիմութեան ուղին փակել արուեստագէտներու դէմ, լոկ անձնական շահու նպատակաւ: Ամէն արուեստ, ամէն առեւտուր ազատ թողելու է Կայս. Կառավարութիւնը, եւ մենաշնորհներ տալու տեղ, քաջալերելու է այն ձեռնարկները միայն որոնց նպատակն է օտարին դէմ մրցիլ, ի հարկին օժանդակելով նաեւ անոնց, ինչպէս կ'ընեն ուրիշ տէրութիւնք:

Սակայն առեւտրական մրցման այս ոգին ստէպ կը պակսի մեզ, ինչպէս կը պակսի նաեւ առեւտրական ընկերութիւններ կազմելու ոգին: Մեր մէջ չէ տեսնուած երբեք որ միեւնոյն դասակարգէն 10—20 արհեստաւորներ — օրինակի համար, կօշկակարներ, գերձակներ — միանան, ընկերութիւն մը կազմեն, օտար մեծ վաճառատուններու դէմ մրցելու համար. եւ ամենքն ալ հիմա, բաց ի մէկ քանի առանձնաշնորհեալներէ, կէս կուշտ կէս անօթի են, մինչդեռ Շթէյններ, Մայէրներ, ամէն օր մեր ոսկիները կը քաշեն, իրենց փտուն եւ երկու քղանցքներն իրարու չեկող ածել զգեստները հազցնելով մեզ: Եւ եթէ վերջին տարիներս մէկ քանի Հայ վաճառատուններ բացուեցան, աշնոնք ալ իրարու դէմ մրցելու ելած են, փոխանակ իրենց դրամագլուխները միացնելով օտարին դէմ ոգորելու: Բ. Պ.



ԽՂՃՄՏԱՆՔԻՆ ԴԻՄԱՑ

(Ն Ո Ր Ա Վ Է Պ)

(Շարունակութիւնն նախորդ քիւէն եւ վերջ)

«Եւ, բան մըն է նորէն, երբ կեանքիս ա'յսքան տարիներէն մէկ օր մը ունեցած ըլլամ, մէկ օր մը միայն որուն մէջ կրցած եմ տիեզերքիս ամենէն երջանիկ էակը նկատել ինքզինքս. Յուլիսի 30ն էր անիկա: Թեւս ունէի զինքը, մինչ կը քալէինք այգուն, նոր ցաթող արեւէն չինեղուելու համար շուքերը փնտռելով ու կտրելով դեղձի պարտէզները. կարծես մեր վիճակն ունէին շուրջի ծառերն ալ, անխօս փլելով իրենց երջանիկ բեռին, դեղձերուն տակ: Հետախուզող աչքերէ հեռու՝ ամբողջ օրը անցուցինք շուքերուն մէջ, բլուրի մը գլուխահին վրայ՝ որուն մէկդիէն ջուրը կը բզկէր մեր տարփանքին պէս յորդ ու վճիտ: Իմ փափաքիս վրայ արտօնեցին զիս թեւերս սօթած անցնելու կրակին առջեւ՝ ոստին անցուած գառնուկը խորովելու համար, մինչ Միւնէիւէր բօպան աջէն շիք մը հանգրիճած՝ ինծի կը հօլովէր երբեմն, ձեռքը օլիի գաւաթ՝ մը ու ժպիտը չրթունքին: Եղբօրը «քէֆուլ» հենէն ողբեր՝ պարզեցինք այդ օր իրարու խռովքի այն զգացումները որ առջի վայրկեանէն մեր մէջը արթնցեր էին: Իրարու ներս թափանցեցանք, ան իմին անկեղծ պաշտումս զգաց հատնում-վիճակէս, ես անոր աչքերուն մէջ կարդացի սիրոյ յաջորդող մահադին տխրութիւնը: Պաշտումի յայտնութեանց ծիծաղելի թռեկակութիւնը չէր մեր ըրածը, եւ հարկ չի կար ալ ատոր, որպէս զի լրում գտնէր քսանըջորս տարեկանի մը զգլխումը, հարկ չի կար, քանի որ մէյ մը թեւադրուած ու դերուած էի թարթիչոտ անթարթ աշուրներու թովքէն, բաց-խօսիկ, բուստէ շուրթերու մեղրի ծորքէն, իր բօպային պջրտ հանգրիճումէն, ու փրթթումէն հրդեհ ժպիտներու՝ դէմքին թաւիշ փոսիկներուն մէջ...»

«Այրի մըն էր. Բայց բան մը պակաս՝ էր միթէ իր կոյս հրապոյրներէն, դեռ ես ա'յնքան չնորհալի, ա'յնքան մանկամարդ էր անիկա: Այնուհետեւ, կը խորհէի, տեսնեմք կրցած էր սիրել իր մեռած ամուսինը, որպէս զի վիշտ ընէր հիմա: Արեւը կրնայ փոխել կաթ գոյնը մարմարին, — Երգուընցուցի զինք որ ինէ վերջ մէկը չը սիրէ Կուսադարձ խօսք տուինք գաղտ հասցէով մը թղթակցիլ, մինչեւ կեանքերնուս միացման օրը»

«Երբոր Պոլիս եկայ՝ պէտք եղածէն աւելի գոհ էր մնացած բաթրօնս, որովհետեւ Արուսթ աղայէն վաստըկած բարեկամութիւնս՝ գործը նպաստաւոր պայմաններու տակ կնքել տուած էր: Բայց իրմէ բաժնուիլս խորունկ պարապ մը բացած էր ներսիդիս, ինծի անանկ կուգար որ ներսէս գործարան մը փրցուցած հանած էին: Զրադումիս մէջ հիմայ նուազ փութկոտ, ժամանցներէս փախչող ու գեղեցիկ սեռին նայող ա'յնպէս որպէս թէ անշունչ իր մը ըլլար ան: Մէկ առանցքի շուրջ կը դառնար գաղափարս, հետը կարգուիլ: Մօրեղբայրս եթէ դէմ կենար ու ես շարունակէի յամառիլ որոշումիս մէջ, ձեռքովս տապալած պիտի ըլլայի ապագաս՝ զրկուելով ժառանգութեանս իրաւունքէն: Ինչ փոյթ. պէտք էր խօսիլ սակսյն, պէտք էր վերջապէս թափել սրտիս կրակը, ինչ գինի որ նստէր ինծի այդ առաջարկս:

«Ձէի՝ սխալած: Պատմութիւնս ըրի չըլի՝ ան, գայրոյթի թոյնը երեսին»

«—Սըվո'ր նայէ մէյ մը, որոտաց, պիւր կէօրիւշ պիւր պիլիշ՝ ելեր ինք իր զլխուն գործ կը տեսնայ. հէմ ան չէ ամա: ամմէնքը աղէկ, սա օրբեվարի ըսածդ ինչ պիտի ըլլայ, իւրթիւրը՝ ինկար սիւրիւ մը թըֆըլ աղջիկներու մէջ...»

«Պատասխանս սենեակէն դուրս նետուիլս եղաւ, ու դուրս նետուիլս ալ լալ: Այս ասուլիսին վրայ երկու շաբաթ բոլորուեր էր, որու միջոցին կ'երեւայ թէ քարսիրտ մօրեղբայրս կրցեր էր նշմարել զուարթութեանս պակսիլը և գթալ վրաս, որովհետեւ օր մը, ճաշին տակ, ինք բացաւ խօսքը, ու ձայնը կամացցունելով, հօր մը ողորթիչ շեշտը դնելով անոր մէջ, տւելոց».

«—Տղայ մի՛ բլլար, ինքզինքի՛դ եկուր քիչ մը, վաղը հարցունեմ փնտռեմ նայիմ ի՞նչ այար է տա կնիկը...»:

«Չորցուցի արցունքս ու կազդուրուած ետքի յուսատու պատասխանէն՝ վեր սենեակս ելայ: Ամառուան այն իրիկուններէն էր որոնց երազայնութիւնը սիրող հոգիները գիտեն զգալ: Սոստումս յարգելու ատենը եկած էր: Որպէս զի ներշնչուիմ, սուգեցի՝ նայուածքս ղէպի հարաւ հորիզոնը ու ձեռք առի գրիչս: Կեանքին մէջ մէ՛յ մը կրնայ մարդ տողել մէկ գրիչէ ելած ատանք գորուածք մը. պարզ, միամիտ տողերու մէջ դրի սիրտս, սէրս ու կարօտս: Պատուհանս բաց էր, ժանեակի պանքը իր վարագուրակալէն անջատուած՝ կուգար հովդպիլ ուսիս վրայ, մինչ հեռուն, իրիկնամուտի զեփիւռը ականջիս կը բերէր յոյն կիթառի մը մեղանուշ զարնուածքը:

«Նոյն գիշեր սրճարան երթալուս՝ օրուան թերթի մը մէջ աչքս ինտո՛ր եղաւ սա կտորին զարկաւ, ես որ «Գաւառային Սուրհանդակ» ըստած բանը երբեք չէի կարդար.—

Պրուսայէ կը գրեն մեզ.

Գաւառի անձնասպանութիւն մը գործուեցաւ շաբաթուս: Այրի ՏԿ. Մ... մեռած գտան իր սենեակին մէջ, ինքզինքը զառիկով թունաւորած: Շարժառիթները չեն ստուգուած, միայն թէ անձնասպան կոշի բերին մէջ գտան թուղթ մը որ չափազանց ծամուած ըլլալուն վրայի գիրը կարելի չեղաւ կարգալ: Խորին յուզում առթեց այս գէպը բոլոր գիւնքը ճանչցողներուն, վասն զի ողբացեալ կինը համակրելի, ազնուական ու բարեսիրտ անձի մը բոլոր յատկութիւնները կ'իւրացներ յինքեան:

«Զգեցի որ ինչայ թերթը մատներէս: Լի մօնատ մը ապսպրեցի: Աչքերս կը մթննա-

յին ու կուրծքիս զարկը ալ չէր բաներ, կարծեցի որ կը դադրիմ կոր ապրելէ...»:

«Այսպէս մէկ շունչով կը քայքայուէին իմ բոլոր երազներս:

«Հանելուկը չէր լուծուած սակայն: Այդչափ կարճ ատենի մը մէջ՝ որու միջոցին անկարելի էր նոյն իսկ սպասումէ կամ լքումէ մը ասթուած սիրոյ մարիլը միտքէ անցունել, ի՞նչ բան, ի՞նչ բան կրնար ուրեմն տեղի տուած ըլլալ անոր՝ իր դեռատի կեանքը չքացնելու: Բա փայլակին պէս որ ակնթարթ մը չի տեւած՝ թօնուտ երկինքը ծակելով կ'անցնի, յանկարծ մտածում մը եկաւ կածկլտալ միտքիս գիշերին մէջ: Արդեօք մօրեղ...»:

«Յաջորդ օրը, մօրեղբօրս բացակայութենէն օգտուած՝ տունը տեղ չի մնաց փընտոտութի ելայ, եւ գտայ, գտա՛յ վերջապէս պարտէզը ալբիսքի տուփին մէջ պըլորուած նետուած թուղթի այն փսփոթ՝ որ պոխեօնէն էր հէք Միւնէվէրի խրկուած նամակին, անոր հասկնալիք լեզուովը: Նայէ ի՞նչ գրեր էին խեղճին:

Տիկին,

Պէտք է վերջապէս անկեղծ ըլլալ: Անկարելին կա: Եկի ընկույթիմար ծրագիր մը շինած ու խօսած էի ձեզ ի՞նչ շուտ կը մարին եղեր սակայն պաշտումի խելայեղութիւնները: Անգամ մը որ ես ու գուք չափեք այն խրամատը զոր մէջերէն բացած են ընկերային պատշաճութիւն կոչուած բանք եւ ձեր այրիութիւնը, իրարու գէշ զրուցելու տեղ մը չէք ունենար կարծեմ: Ձեզի կը թայ ներել եւ մոռնալ ամէնքը, ինծի համար որովհետեւ շատ գիւրին եղաւ երկրորդն ընել:

«Տակը իմ անունս: Ո՛ւհ, կ'ուզէի չապրած ըլլալ այդ բոսպէին: Ի՞նչ խորունկ եւ անչափելի սէր է եղեր անորը որ ինչ տեսած այս յանկարծակի լքումին վրայ կեանքէն հրաժարելու չափ վհատ եւ զայն իրագործելու մէջ ա՛յնքան արի զգար ինքզինքը: Եւ այն ցոյցին մէջ՝ զոր ըրեր էր թոյնը բերնին տանելէ վերջ իմ գիրս խածատելով, կարծես վայրագ արհամարհանքը կար խարուած կնոջ՝ էրիկմարդուն ընդմէջ...»:

«Երանի՛ թէ չը գտնէի այդ թուղթը,

ան էր որ, ափսոս, զիս վրէժխնդիր ու
ոճրագործ ալ ըրաւ։ Պէտք էր բանով մը,
կեանքովը տուժել տայի իրեն, այդ կո-
պիտ մարդուն, սիրոյ դէմ խաղցած այս
անգութ կատակը։ Այսպէս... գիշեր մը...
երբ կը քնանար մօրեղբայրս... տարի...
սենեակը դրի ածուխի կրակարանը... ու
դուռը գոցեցի... Իր գրասեղանին վրայէն
գտնուած թուղթը, — որուն գիրը կեղ-
ծուած էր ինձմէ, — փրկեց կեանքս եւ
անպարտ հանեց զիս արդարութեան առ-
ջեւ...։

«Հարստութեանս տիրանալէ յետոյ քաշ-
ուեցայ գործէս։ Աշխարհք աչքիս չէր։ Հոս
բերի բնակութիւնս, այս արուարձանին ան-
ծանօթ ու միամիտ ամբոխին մէջ ուղեցի
ապրիլ, որպէս զի անցեալէս կամ ներկայէս
ներս մէկը կարող չըլլա՞ր թափանցելու։

«Խղճմտանքս կար սակայն...։ Գիշերը
վերմակիս տակ ու ցորեկը աչքիս առջեւ
ստուեր մը կը հալածէր, կը հալածէ՞ր զիս...
Կղզիացայ սուգիս ու տառապանքիս մէջ,
Սիրոս երկու յիշատակներու այլանդակ գե-
րեզմանը կը կրէր։ Աղօթեցի մէկուն հոգիին
համար, ու միւսէն խնդրեցի որ բարեխօսէ
Տիրոջը ի՞մ հոգիիս համար...։

«Այդ օրէն ի վեր դաշունած եմ սիրտս
նոր հաճոյքներու եւ նոր սէրերու համար.
կիրքն ու ըղձանքը նե՛րսս խղճեցի եւ ա-
մուրի ապրեցայ։ Սկսայ կծկուիլ, սկսայ
վտտուժիլ, սկսայ ծերանալ կանուխ կա-
նուխ, որովհետեւ ամէն ըոպէ անողոք տա-
ռապանքը կար լանջքիս տակ՝ խղճիս կեղե-

քուններուն։ Ամէն օր լրագիր կարդացի
գտնելու համար հոն իմինիս վիճակակից
կեանքի պատկեր մը, բայց չի տեսայ։

Ինչ որ կրցի ընել մարդատեացի այս մե-
նութեանս մէջ, անձիս նուիրումն էր անի-
կա՝ բարիք, ու մի՛նակ բարիք գործելու։
Աղիք մը որ անօթութեամբ գալարուեցաւ՝
հոն իմ պատառն նետեցի, ցաւ մը որ մտաւ
չքաւորին դուռնէն ներս՝ հոն բծիչկ ու դեղ
խրկեցի գաղտագողի, մարմին մը գորցու-
տը մսեցուց՝ անոր իմ լօթիկս հագցուցի,
ու տուի՝ անօժիտ աղջկան փափաքուած
գումարը, որպէս զի իր երջանկութիւնը չի-
նէ։ Ասանկով լմնցուցի հարստութեանս մին-
չեւ վերջին լուսան։ Չեմ գիտեր թէ մեղ-
քիս կշիռէն բան մը թեթեւցո՞ւց այս ըրած-
ներուս յաճախութիւնը, կարօտին օրհնէնքը
լսե՞ց Վերինը։ Բայց մինչեւ սա վայրկեանը
միայն խղճիս աղետալի խժտուքը սա ցա-
ւակո՞ժ գանկին մէջ (բռուցցի մը փակցուցնե-
լով գլխուն) ու Ստուերը, Ստուերը չի գնա՞ց
երբեք աչքիս առջեւէն...։


.....

... Այս պահուն ձեռքը ծառացուց դէմ-
քին վրայ, յետոյ ցցեց մատները իրարմէ
բացած ու անդին դարձուց գլուխը, իբր թէ
խուսափիլ ուզէր այդ ահաւոր Ստուերէն։

— Բիչ մը ջո՛ւր, մրմնջեց հեւալով։

Բերանը փրփրած էր։ Գաւաթը լեցու-
ցած երբ իրեն հրամցուցի՝ տեսայ որ այլևս
չէր շնչեր Անտօն աղան։

ԹԷՈՒԻԵԼ ԼԱՊԻՆՆԱՆ



ԻՄԱՍՏԱՍԻՐԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆ

“ՀԱՆՐԱԳԻՏԱԿ”, Ի

ԴԱՍԱԿԱՆ ՓԻԼՍՈՓԱՅՈՒԹԻՒՆ

Փիլիսոփայութեան պատմութիւնը գրած են Brucker, Tennemann, Tiedemann, Buhle, Ritter, de Girando: Tennemannի կը պարտի գիտնական աշխարհը այն նշանաւոր ու կարգաւոր գրուածն որուն վերնագիրն է Le manuel de l'histoire de la philosophie. ասոր ֆրանսերէն թարգմանութիւնը կայ. և Տամիրոնի՝ Histoire de la philosophie en France au XIX Siècle մը: Գուգէն՝ որ գիտութեան այս մասին կամ ճիշդին զօրաւոր մղում մը տուաւ, իր 1729ի Ընթացիկ մէջ Փիլիսոփայութեան Պատմութեան ճարտար ու աջողաձեռն պատկեր մը գծած է. ասկէ զատ իր բազմաթիւ իմաստասիրական գրուածոց մէջ լուսարանած է այս պատմութեան ամէնէն մթին կողմերն ու կէտերը:

Փիլիսոփայական գիտութեանց բառարան մը — որու կը հետեւինք մենք ալ մեր Հանգրազիսակի իմաստասիրական յօդուածոց մէջ — որ փիլիսոփայութեան նշանաւոր վարժապետաց խմբագրութեամբ հրատարակուած է (1844—53) վեց հատորի բաժնուած և որ վերջէն 1884ին կրկին տպագրուած և երկու կամ մէկ խոշոր հատորի վերածուած է, կը խօսի սոյն գիտութեան ու անոր պատմութեան բոլոր շահեկան ու կարեւոր եղած բաներուն վրայ: Գերմանիոյ մէջ ալ Grug միեւնոյն անուամբ իմաստասիրական գիտութեանց ընդարձակ բառարան մը յօրինած է, որ նոյնպէս ֆրանսերէնի թարգմանուած է: Encyclopédie Methodiqueին մէջն ալ՝ իմաստասիրութեան բառարանի մը գրուածն ալ շատ հմտութիւն կը պարունակէ և միայն Դիտտութեանց պատմութեանը վրայ կը ճառէ, եւ ուրիշ շատ մը Logiqueի, Métaphysiqueի Moraleի մասնաւոր բառարաններ կան որ իմաստասիրական ընտիր տեղեկոյթ ու ծանօթոյք կը պարունակեն: Ըստ մեզ և ըստ ամէն լրջամիտ իմաստասէր վարժապետաց, փիլիսոփայական գիտութիւնն և անոր պատ-

մութիւնն իր մէջ խղճմտօրէն, եւ ամենէն աւելի դասական կարգաւորութեամբ ու ճշտութեամբ պարունակող մատեանը Գուգէնինն է, զոր կը գործածեն ֆրանսայի եւ գրեթէ ուրիշ շատ մը երկրաց բարձրագոյն ու միջնակարգ վարժարանաց մէջ: Գուգէն թէ՛ յստակախօս է եւ թէ՛ վերջին զտեալ ու ճշտեալ ընտրողական իմաստասէր հեղինակն է, որու հետեւած են եւ կը հետեւին շատեր, թէ՛ իբրեւ դասախօս, թէ՛ իբրեւ մատենագիր:

ՓԻԼՍՈՓԱՅՈՒԹԻՒՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ

Սոյն գիտութիւնը, որ բոլորովին նորատենի գործ է, իրեն նիւթ ու առարկայ ընտրած է խուզարկել, հետազօտել Պատմութեան օրէնքները՝ մարդկութեան ուսումնասիրութեան մէջ: Կ'առաջարկէ կամ կը հնարէ այնպիսի ընդհանուր բանաձեւեր զորս աւելի կամ նուազ յաջող ճարտարութեամբ կ'իրարկէ կամ կը յարմարցնէ ազգաց ու ժողովրդոց պատմական ամէն թընուականներուն: Վիգօ, Հերտեր, Հէկէլ (Hegel), Պալանշ, Գուգէն՝ պատմական գիտութեան այս ճիւղն ընդգրկած և մշակած են, եւ անձնիւրն այս մասին իրեն յատուկ դրութիւնն յօրինած, հիմնած է, թէեւ տակաւին վճռական ու վերջնական արդիւնք ունեցած չըլլայ: Այս նիւթին վրայ հանձարեղ գրութեան մը յիշատակումը (exposé) կայ Գուգէնի Introduction au cours d'histoire de la philosophie (1838) անուն ընտիր երկասիրութեանը մէջ:

— Բնական փիլիսոփայութիւն (Philosophie naturelle): Այս անունով կը կոչուի, նա մանաւանդ Անգլիոյ մէջ, դիտողութեան վրայ հիմնեալ գիտութեանց ամբողջը որք ֆիզիքական ու բարոյական աշխարհին կը վերաբերին:

— Փիլիսոփայութիւն բնութեան (Philosophie de la nature): Այս տիտղոսով կը ճանչցուին իմաստասիրական կարգ մը կամ տեսակ մը հետազօտութիւնք որով կը պարապին այս դարու սկիզբէն ի վեր աւելի Գերմանիոյ մէջ իմաստասէր ու գիտունք, եւ որուն նպատակն է համայն բնութիւնը բա-

ցատրել միակ սկզբունքով մը, որմէ պիտի մականեն կամ հանեն, ի յառաջագունեց, ֆիզիքական աշխարհը եւ բարոյական աշխարհը վարող օրէնքները եւ զանոնք կազմող երեւոյթները, Շէլլինկի եւ Հէկէլի դրութիւնքն են որ այս անուամբ կը կոչուին: Այս դրութիւնները, եթէ իրենց երեւոյթին կամ ուղղութեան լաւ ուշ դնենք, տեսակ մը ծպտեալ կամ քողարկեալ Համաստուածութիւն են:

— Բնութեան փիլիսոփայութեան* կը վերաբերին նաեւ Պրինսօի գրութիւնները, Հօլպա-

*ԽԱՆ.— Բնութիւնը բառը (որուն ֆրանսերէնէն է nature, որ կը ծագի լատին naci, ծնիլ բառէն) կը նշանակէ նախ՝ տիեզերքը կազմող բոլոր էակներուն ամբողջութիւնը, երկրորդ՝ ամբողջութիւնն այն յատկութեաց զորս էակ մը իր ծննդեան, իր կազմութեան, իր նախնական վիճակին բերմամբն ի բնէ ունի, հակառակ այն յատկութեանց՝ զորս վերջէն արուեստական կերպով կամ դիպուածական պատճառներով ունենալ կը բերուի, երրորդ՝ դրութիւն մը ուժերու եւ օրէնքներու որք կը վարեն իրաց գոյութիւնը, էակաց յաջորդութիւնը, նորերուն մէջ՝ ինչպէս Տիտրո եւ Հոլպախ, հիներուն մէջ ալ՝ Լեւկիպպոս եւ Էպիկուր, բնութիւնն անձնաւորելով՝ ըրած, նկատած են զայն ոյժ մը հարկաւոր բայց կոյր, տիեզերական եւ ամենակար պատճառ մը որով ամէն ինչ բացատրել կը յաւակնին: Այս դրութիւնը կը կոչուի նաեւ Բնապաշտութիւն (naturalisme) որ Լուկրիտիայի De natura rerum անուն բանաստեղծութեան մէջ երգուած է: Բայց Բնութիւնը հոս եթէ ոչ Աստուծոյ աւելի կամ նուազ տարտամ, անորոշ հոմանիշը չըլլայ, սակայն այս վարդապետութիւնը որ նիւթապաշտներու օրինամատեանն (code) է, կը շփոթի, կը խառնուի Անաստուածութեան կամ Համաստուածութեան հետ, որ մարդկային յառաջդիմութեան օգտակար բան մը չըլլալէն զատ մարդկային մտքին ալ պատուաբեր չէ: Այսու ամենայնիւ ալ փիլիսոփայական իմաստակութեան մէկ տեսակն է՝ յաւիտենական կրկնումն սկզբան, որով կը բացատրուին իրերը նոյն իսկ իրերով:


խի Systeme de nature, Ռուպինէի Traité de la nature երկը, Ազախի Explication universelle անուն գործը:

Առաջին փիլիսոփայութիւնը (Philosophie première), այս անուամբ կոչեց Արիստոտէլ ինչ որ անորմէ ի վեր բնագիտութիւն կ'անուանեն:

— Փիլիսոփայութիւնը կը կոչուի նաեւ տպագրութեան մէջ նշանագիր մը՝ որ cecero եւ petit romain կոչուածներուն մէջ 10 բունք տպագրական փոքրիկ տառ մ'է. այսպէս կոչուելուն պատճառն ալ սա՛ է թէ փիլիսոփայական, այսինքն գիտական գործոց տպագրութեան համար այս գիրը գործածել նախապատիւ կը համարէին:

Ընթերցողք՝ որոց մէջ, անտարակոյս, իմաստասիրական ծանօթութեանց հմուտներ չատկան, անշուշտ դժուարութիւն չեն քաշեր հասկնալու, մարսելու համար իրենց կարգացած եւ հանդիպած կարգ մը իմաստասիրական սակաւալուր կամ խրտուցիչ բառերը, մինչ անհմուտք կրնան դժուարաւ մտիլ: Սակայն գիտնալու է թէ՛ մարդ մը ո՛րքան աւելի սիրէ ընտանենալ հմտական ո՛րեւէ ճիւղի, — մանաւանդ փիլիսոփայականին՝ որ գիտութեանց գիտութիւնն է, եւ զոր ամէն մտացի մարդ սերտած, ուսած ըլլալու է, առանց որոյ մտքին պատիւ չի բերեր. — եւ մարդ ի՛նչ կարգի կամ պաշտօնի կամ գործի ալ պատկանի, նոյնքան աւելի կը քաղցրանայ այն, եւ դիւրամբառելի ու դիւրամարսելի կը լինի. բաւական է որ քիչ մը ուշադրութիւնը սրած ու լարած կարգայ, «Васяк рилл чим գիґер՝ ուսաղիր րլլալ չգիցողին համար» կ'ըսէր Ռուսո հանգիստաւորապէս, Ի՞նչ հասկցնել կրնանք մէկու մը որ՝ փոխանակ կարգացած գրութեան վրայ մտածելու, կը մտածէ իր սիրուհոյն կամ շուկայի առեւտուրին վրայ: Փիլիսոփայական բոլոր դրութիւնները մի առ մի կարգաւ պիտի բացատրուին, անոնց հիմնադիր բոլոր անուանի ու կարեւոր իմաստասիրաց պատմութեանց հետ:

Ա. Լ.



Գոհութեամբ կը հրատարակենք Սասկան Վրդ.ին գողերիկ ու զգայուն մեկ գրութիւնը .
որ իր կղերական սրբասուն հոգին կը ցոլացնէ մոմիկին միսդիւ բոցին մեջէն :

Մ Ո Մ Ի Կ Ս

Ա.Ռ. Գ. Զ.

ԱՆՔՈՒՆ կ'անցնի հոգետագնապ պահը գիշերուան . վար կ'իջնեմ մահճակալէս ,
մահու անկողինէս : Կոյր մութին մէջ խարխափմամբ կը գտնեմ մոմիկս ու լուցկին ,
մսկոտ մատներովս կը վառեմ զայն որ կ'սկսի իր տոնոյն պլպլումով լոյս տալ աչքերուս
ու խաւարչտին խցիկիս :

Ձեմ գիտեր թէ՛ մինչ անդին անտես ոգիները քնաբեր կուգան իրենց քնքուշիկ ու
բացխորիկ թաթիկներով կափուցանել խոնջեալ աչքերը մարդկութեան , ինչո՞ւ այնքան
հեռի խոյս կուտան իմ աչքերէս : Երէկ գիշեր , մեռելոտի գլխիկս քարացած բարձիս
վրայ դրի ու վերցուցի անընդհատ , կարծես ներքնավառ կրակ մը , անշէջ բոց մը կը
լափիւզէր ներսիդիս :

Թարթափուն աչքերս ճերմակ ու վտիտ մոմիկիս յառած՝ պի՛շ պի՛շ կը նայիմ անոր ,
կը դիտեմ զայն անթիթ , որոյ մէկ նմանատիպ պատկերն ալ կը կայծկւտայ կաւաչէն
տնակիս ներքին խորանին մէջ : Բայց , ո՛հ , մոմիկս կը հալի ու կը հատնի անզգալաբար ,
անգիտակից իր տխուր վախճանին :

Մոմիկիս կեանքը կ'անդրադարձնէ գիս իմ կեանքիս վրայ , ու մտածել կուտայ թէ
այս վերջինն ալ հատնելու վրայ է արդէն : Հատնումը հաւասար է , մէկն անզգալա-
բար , իսկ միւսն զգայաբար :

Կ'ուզեմ գիշերուան հոգեմաշ տաղտուկին հետ միաքս չարչրկող մտածումները մէկդի
վանել . սիրած գրքերէս մին ձեռքս կ'առնեմ , բայց շուտ կը յոգնիմ , գիրքը ձեռքէս վար
կ'իյնայ , կրկին վեր կ'առնեմ զոյն , կարդալու ճիգ մըն ալ կ'ընեմ , սակայն ո՛չ . Ո՛չ
քնաւ աչքերս կը զօրեն եւ ո՛չ թուլցած բազուկներս : Թարթիչներս վար կ'իյնան թօշ-
նած ծաղկի թերթիկներու նման , եւ , ահա հոգի լլկող վայրկեանը ասկից է որ կ'սկսի
Տիեզերքն ամբողջ իր է՛ն անճոռնի , է՛ն այլանդակ պատկերներու պէսպիսութիւնները
կը բերէ կը լարէ մտքիս ու յոգնած երեւակայութեանս առջեւ , որոնք իբր սեւ ու ճիգ
օղակներ տխուր խոկումներուս անծայր հիւսուածքին , հոգիիս՝ Տանջանքը ու սիրտիս՝
Մըրիկը կը հրամցունեն . . . :

Թմբեցուցիչ մրափէ մը յետոյ , ընդոտ կ'արթննամ ընդարմացած ու մարմրուն վիճա-
կէս , կը դիտեմ շուրջս : Ո՛հ , ոչինչ կայ հոն , հատնող մոմիկս է միայն որուն պատ-
րոյգը հիմայ հոգեվարքի մը տենդոտ գալարումները կ'ունենայ : Ինքնամիտ մտած-
մամբ կրկին կը նայիմ մոմիկիս , որ իր պաշտօնը կատարելով կամաց կամաց կ'անէանայ
ու կը մարի , փաթթուելով սեւ պատանքին գիշերուան : Մինչ այսպէս կը մտածեմ հոգե-
յուզմամբ՝ հատնող սպառող մոմիկիս վերջին պլպլուկին վրայ , աչքիս հանդէպ կը
պատկերանայ հոգիիս մոմիկը . ա՛ն ալ օր մը պիտի մարի սեւ փոսին մէջ հողակոյտին :
Բայց այս երկու ճերմակ հատնումներէն մին լոյսին հետ կ'անէանայ , իր վտիտ բոցէն բան
մը չպահելով , մինչ միւսը կարծես ցոյց կուտայ իր յամր երթը դէպի յաւիտենակա-
նութիւն . մին անզգայ ու գործիք , միւսը զգայուն ու գործող :

Սկիւտար

ՍՍԱԿԱՆ ՎԱՐԴԱՊԵՏ

ՏԵՍԱԿԱՆ ԵՒ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹԻՒՆ

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

ԻՄԱՅՄԱՆ ԳԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ԳԼՈՒԽ Բ.

ՀՈԳԻՆ ԵՒ ԻՄԱՅՄԱՆ ԿԱՐՈՂՈՒԹԻՒՆԵՐ
(Շարունակութիւն Ի քիւեց)

Անցնինք հոգւոյն եւ անոր կարողութեանց ուսումնասիրութեան, Հոգին երեք գլխաւոր կարողութիւն (faculté) ունի, ինչպէս զգացուցիւք արդէն սոյն դասախօսութեան սկիզբը. 1. Իմացականութիւն (intelligence կամ ententement, ճանչնալու կամ գիտնալու կարողութիւն), 2. Զգայնութիւն (sensibilité, համակրելու կամ հակակրելու կարողութիւն), 3. Կամք (volonté, այս կամ այն բանին համար ազատօրէն որոշում տալու կարողութիւն), Վերջին երկուքը, (Զգայնութիւն և Կամք) իրենց միութեամբ կը կազմեն բարոյականի սահմանը, որոյ վրայ պիտի խօսինք յետոյ. նախ պիտի զբաղինք առաջինով, այն է՝ Իմացականութեամբ:

Բայց նախ ծանրանանք հոգւոյն բնութեան վրայ. Հոգին մի է եւ միասնական. իր էութիւնը, իր բնորոշ ու յատկանշական հանգամանքն է միութիւնը: Ուստի պէտք է զգուշանալ կարծելէ թէ՛ ա՛յն կարողութիւնները՝ զորս հոգւոյն մէջ կը նկատենք՝ որոշիչ մասերն են ամբողջի մը զոր անոնք կը կազմեն իրենց միութեամբ, ինչպէս զանազան անդամներն ու գործարանները կը կազմեն մարմինը՝ իրենց միութեամբ: Այսպէս չէ՛ հոգին. անիկա անլուծելի է, և իր կարողութիւնք իր սեփական զօրութիւններն են միայն որոնցմով օժտուած է: Անոնք միշտ իրարու հետ շաղապատուած են եւ զրեթէ միասնաբար, միահոգոյն կը գործեն: Եւ երբ, լեզուի դիւրութեան համար, կը թուինք հեռանալ այս կարծիքէն, և զանոնք կը նկատենք իւրաքանչիւրն ուրոյն, առանձինն, որոշ առարկաներու պէս, մարմնոյն կապերով կաշկանդուած մեր տկար բնութեան միայն կ'անսանք, եւ ուսումնա-

սիրութեան համար կը բաժնենք ինչ որ իրապէս միշտ անբաժան է: Անտարակոյս մենք ալ պիտի պարտաւորինք այսպէս ընելու. բայց պէտք չէ մոռնալ հոգւոյն միութեան այն մեծ օրէնքը, եւ հետեւապէս ա՛յն կապը որ անոր կարողութիւնները կը միացնէ, ինչպէս նաեւ անոնց փոխադարձ շարժումը:

Ասկէց զատ, մարդկային հոգին, հակառակ այն այլազանութեանց, պէսպիսութեանց զորս երկրորդաբար կը ներկայացնէ զանազան անհատներու մէջ, սակայն ոչ նուազ ի բնէ և իր էութեամբ միշտ նո՛յնն է: Հոգին ցոյց կուտայ հասարակաց սկիզբ մը, ծագում մը, միակ ու նոյն հեղինակ մը, միակ եւ նոյն վախճանական նպատակ մը: Հոգւոյն ունեցած բոլոր կարողութիւնները մեզմէ իւրաքանչիւրին ալ տրուած են, եւ մենք անոնց սերմն ընդունած ենք մեր կեանքն ընդունած ատեն: Այս սերմերն անտարակոյս ամենուս ալ միեւնոյն աստիճանաւ կամ քանակութեամբ չեն տրուած: Մարդոց միջեւ կեցող անհաւասարութեան առաջին աղբիւրն է այս, որոյ պատճառն անտարակոյս Արարչին գաղտնիքն է: Աւելորդ է ըսել թէ ո՛րքան կարեւոր է հոգւոյն այլազան կարողութիւնները ճանչնալ ու գնահատել, զանոնք տղայոց մէջ զարգացնելու, և այդպէս պատրաստելու համար ապագայ մարդը: Անտարակոյս փորձառութեամբ է որ գործնական դաստիարակութեամբ զոր դաստիարակը պիտի յաջողի ճանչնալ այդ կարողութիւնները, բայց նաև մարդկային բնութիւնն ուսումնասիրելով, մանկավարժութեան դասերէն եւ վարպետներու ցոյց տուած ուղղութիւններէն օգտուելով: Եթէ՛ այսպէս է, ինչպէս կը հաւատանք, ուրեմն ո՞ր ուսումն երբեք այնքան շահեկան եւ օգտակար եղած է դաստիարակին համար, որքան մանկավարժութիւնը: Արդարեւ երկար ատենէ ի վեր վիճաբանուած է եւ զեռ կը վիճաբանուի հոգւոյն կարողութեանց անուան, թուոյն և դասաւորման, և մասնաւորապէս իմացական կարողութեանց վրայ: Եւ սակայն անտարակոյս այս դժուարութիւն չի կրնար կասեցնել զմեզ, վասն զի չենք ու-

զեր խառնուիլ այդ վեճերուն, որոնք երկրորդական չահեկանութիւն մը միայն ունին անոնց համար որք իրաց գործնական կողմը միայն կը նկատեն, այն է տեսականին կիրառութիւնը՝ դաստիարակութեան գործին մէջ, էական բանն է զանց չառնել ոչ մին այն կարեւոր տեսակետներէն, որոց տակ կրնանք նկատել մարդկային հոգին։ Ուրեմն անցնինք մասնաւորապէս իմացականութեան ուսումնասիրութեան։

Ըսինք թէ հոգին կարող է ճշմարտութիւնը փնտռելու եւ ճանչնալու, իրեն սեփական կարողութեանց ուժով, որոց ամբողջութիւնը կը կոչուի իմացականութիւն, եւ իմացական դաստիարակութեան նպատակն է կրթել եւ զարգացնել այդ խումբ մը կարողութիւնները, որք կը կազմեն իմացականութիւնը։ Իմացականութեան կարողութիւնները կրնանք դասակարգել այսպէս. ըմբռնում (perception), ուշադրութիւն (attention), դատողութիւն (judgement), տրամախոհութիւն (raisonnement), յիշողութիւն (mémoire) և երեւակայութիւն (imagination)։

Մարդոց միջեւ կեցող իմացական անհաւասարութիւնն ինչ որ ալ ըլլայ, այս կա-

ՄԱՆՈՒԹ.— Ինչ որ վերն ըսինք հոգւոյն կարողութեանց եւ անոնց ներքին սերտ կապակցութեան վրայ ընդհանրապէս, նոյնը կրնանք ըսել մասնաւոր իմացականութիւնը կազմող կարողութեանց համար։ Այդ կարողութիւնք իրարմէ անբաժան են եւ իրապէս չեն բաժնուիր գործնականի մէջ, եւ կրնանք ըսել թէ մին գրեթէ չի գործեր առանց միւսներուն օգնութեան։ Արդ, եթէ այդ կարողութիւններն ուրոյն ուրոյն կը նկատենք ուսումնասիրելու եւ լաւագոյն ճանչնալու համար, դաստիարակութեան գործին մէջ աւելայն ոչ նուազ պէտք է ի միասին զարգացնել զանոնք, եւ մէն մի դաս, մէն մի հրահանգ պէտք է ծառայեցնել անոնց միահողոյն մշակութեան։ Պէտք է նաեւ ներդաշնակութեամբ զարգացնել, անոնց ի բնէ ունեցած, յարաբերական կարեւորութեան աստիճանին համեմատ։ Ուստի ա՛յն կարողութիւնները, որոց նախապատուութիւն պէտք է տալ, են գիտութեան ըմբռնումը, ուշադրութիւնը և դատողութիւնը։ Վասն զի անոնք աւելի հաստատ են եւ իմացականութեան մասնաւոր սահմանը կը կազմեն։ Վերջապէս եւ մասնաւոր պէտք է ամենքն ալ զարգացնել առանց բացառութեան, եւ պէտք է զգուշանալ անոնցմէ մէկ քանին տարապայման զարգացնել եւ միւսներն անխնամ թողել։

Բոլորութիւններէն իւրաքանչիւրը (յետին մարդուն մէջ իսկ) ընդունակ է մեր ջանքերով բաւական զարգացում մը ստանալու։ Թող երբեք չըսուի, ինչպէս կ'ըսուի յաճախ. «Այդ տղան յիշողութիւն չունի», ինչ օգուտ ունի յոգնեցնել զայն ատոր վրայ, կամ «այս միւսը դատողութիւն չունի», խելք չունի, ինչ կրնանք սպասել անկէ, եւ ինչո՞ւ համար զբաղինք իրմով։ Չկայ մէկը որ իմացականութիւն, յիշողութիւն, դատողութիւն չունենայ։ Ահաւոր սխալ մ'է չճանչնալ այս ճշմարտութիւնը, ամենածանր պակասութիւն մ'է իբրեւ չբնական քառաջ քշել զայն, երբ ձեր ջանքերուն ու եռանդին մէջ կը թերանաք ի բնէ նուազ նպաստաւորեալ տղայոց նկատմամբ։ Ընդհակառակն այս դժուարութեանց մէջ է որ կը յաղթանակէ դաստիարակը, կը կրկնապատկէ իր խնամքները, ոչ մէկ յոգնութեան առջեւ կ'ընկերուի, ապաշնորհ ու ամուլ հոգի մը վրայ կ'ոգորի եւ վերջապէս կը յաջողի ձեռք բերել, չընչին կամ աննշան արդիւնքներու տեղ, իրական զարգացում մը, բաւական ու անհաւան յաջողութիւն մը։

Իննե՛նք հիմա իմացականութեան զանազան կարողութիւններն ա՛յն կարգով, որով թուեցինք զանոնք։ Միեւնոյն ատեն խնամով ցոյց պիտի տանք թէ ինչ միջոցներով, ինչ ոգւով եւ ինչ ուղղութեամբ, ինչ առիթներու եւ ուսման ո՞ր ճիւղերուն մէջ կրնանք մշակել եւ զարգացնել զանոնք։ Բայց ըսենք հոս միանգամ ընդ միշտ թէ, ինչպէս որ ֆիզիքական դաստիարակութեան համար պէտք է չունեցանք կարգ մը սխալմամբ ու մասնաւոր հրահանգներու ու վարժութեանց դիմելու, այնպէս ալ իմացական կարողութեանց զարգացման համար մասնաւոր դասերու եւ յատուկ զբաղումներու պէտք չկայ։ Ամէն դասախօսութիւնք, բոլոր դասերը կրնան առիթ ընծայել մտքին մէկ կամ աւելի կարողութիւնները մշակելու, ինչպէս առօրեայ զանազան զբաղումները, ուսանողին կենաց զանազան պարագաները, դասարանին մէջ, զբօսանքի ատեն, պտոյտներու միջոցին, կրնան յաճախ գրգիռ ըլլալ այդ կարողութիւնները զարգացնելու։ Խնդիրն է առիթը չփախցնել, երբեմն ալ այդ առիթը ճարտարօրէն ստեղծել եւ ընտրանք ու ճարտարմտութեամբ օգուտ քաղել անկէ։

1. ԸՄԲՐՆՈՒՄ (Perception)

(Շար.)

Բ. Պ.

ՄՐՏԻ ԷՋԵՐ

Յ Ո Ւ Շ Ք



ՈՒՄՆԻ դաշուկն երբ փայլի,
Երեքին մեջ սրգապաս...
Երբ սե՛ւ հազնի ֆու ապաս,
Կամ յոյզերու մեջ հալի՜...
Յիշե՛ գիւ :

Երբ, գեթ մը ֆով նըսած,
Դողդոջ ֆընար մ'ի ձեռին,
Ուրկէ հուրֆե՛ր կը թռնին,
Տեսնես նժդեհ մ'աջը թա՛ց,
Յիշե՛ գիւ :

Երբ մտնես տուն մ'որուն մեջ
Կը դողդոջեն ջահֆ աղօֆ,
Երկինֆ մ'ուր կայ խո՛ւնկ, աղօ՛թֆ,
Երբ հոն կարդաս սրժի՛ մ'եջ...
Յիշե՛ գիւ :

Դարնան զիշեր մը հանդարտ,
Երբ պաղպաջեն ասեղֆ թոց,
Անհուն խորֆեն կոյս ամպոց,
Դիտես զանոնֆ երբ անթարթ,
Յիշե՛ գիւ :

Խոր մեկ խորշը անտառի,
Տեսնեն աչերդ երբ սխալ,
Յաւած սրժի աղաղա՛կ...
Որ ծաղկի մ'հուպ կը թառի,
Յիշե՛ գիւ :

Երբոր մահճեն ֆու փափուկ
Գարեկ իջնես դու աշուն,
Ուր ցոյֆ դողան դեռ թագուն...
Սիրոյ արցո՛ւնֆ խուսափուկ...
Յիշե՛ գիւ :

Ա. Ս. Ս.

Ձերդ թիթեռներ զուսաթե,
Ծաղիկ սրժիդ սիրածին
Բոյորսիֆը երբ յածին
Անուրջֆ անո՛ւշ եւ թերե՛ւ...
Յիշե՛ գիւ :

Տերեւ մ'աշնան աստանի
Երբ ծայր ծառին հե՛ֆ, այրի՛,
Դարնան յուշֆովն որ կ'այրի՛,
Ու հողմն երբ զայն զայ ասնի,
Յիշե՛ գիւ :

Երբոր տեսնես մի պարման,
Երկար զիշեր մը խաւար,
Որ, յոյզերէ հողմալար,
Դեֆին եզրը կուգայ ման,
Յիշե՛ գիւ :

Երբ երեքն մի զիշեր
Տժգոյն կայծեր վար վազեն,
Եւ բարեկամֆ ֆեզ ասեն.
«Բոյլի հոգւոյն եւ յուշեր»...
Յիշե՛ գիւ :

Երկրեն ձրմեռն երբ տայ փախ,
Աւետարտ գեղ զարնան
Ծիծառներու հոյլֆ դառնան,
Սրժերն յուշֆո՛վ սիրաբախ...
Յիշե՛ գիւ :

Տեսնես թերթեր երբ ցանցիր,
Ձոր տերեւոց ճիշն նըման,
Յաւած սրժիս մո՛ւնջ թարգման,
Անտուշ զանոնֆ ընթերցի՛ր,
Յիշե՛ գիւ :

Տէրտէր, ժամկոչ երբոր զան
Դրնեն մեջ ցո՛ւրս պատանի,
Մի հե՛ֆ, տգո՛յն պատանի,
Կենաց ջա՛հը իւր մօրկան...


Յիշե՛ զիս:

Երբ տեսնես քար մ'ուր կ'յորդի
Մայր մ'իւր սրտին ցո՛ղն, աշխա՛ր,
Կ'անիծե՛ կեսա՛նքն ու աշխա՛րհ,
Հոգւոյս համար ԱՂԹԹԷ՛

Եւ շա՛ց զիս
Սիրելիս:

Սրվազ

ՄԻՀՐԱՆ ԻՍԳԻՐԵԱՆ



ԲՆՈՒԹԻՒՆՆ ՈՒ ԿԻՆՐ

Ե Ր Գ

(Շար. Ի քիւէն)

Գ



ԻԴԱՍՏԱՆԻ անտառներէն երգաշունչ,
Մինչեւ կատա՛րը աստղերուն սըրտի
փունջ,

Կնոջ հոգին կ'արձագանգէ թովչօրէն,

Սեր սըրտին մէջ հրապոյր ստեղծէ լուսեղէն
Ո՛հ, բովանդակ մարդկութիւնը զայն կ'երգէ,
Հիմալայան բարձունքներէն կըրակէ՝
Մինչեւ նոճի հովանւոյն տակ մահաշուք,
Ուր կինն անգամ ըզգայ Ունայնն զերդ մի սուգ:
Կնոջ սիրտը ճիւղերքին է նըման,
Ուր՝ աստղերու բիւր կոհակներն կը ծըփան.
Ի՞նչ են անոնք — սիրոյ երգերն բոցահեր,
Ամպրոպի պէս յուզեն մարդերն ու ըստուեր,
Մինչեւ մահուան ճաճարին մօտ սե՛ւ ու լո՛ւռ...
Ա՛հ, արցունքի փոխեն երկիրն զերդ ցուրտ ջուր.
Վերջապուէն մինչեւ գիշերն մահադէմ,
Կնոջ փառքը կը ծածանի վըրին դէմ...
Կնոջ դէմքը՝ հոգին ու սիրտն բոցավառ,
Վարսերն լաջերն, կուր՛քն ու ճակատն, ո՛ր քընար,
Ունին իրենց կայսրութիւններն ոսկեղէն,
Մեծ՝ պարսկական լաւորական զահերէն,
Մեծ՝ Հռովմէն, մեծ՝ եգիպտէն Բուրգի զահ,

Մեծ՝ Նեղոսի անեղր փառքէն զիւրասահ...
Պատմութիւնը՝ նո՛յն իսկ երկիրն ցոյց կուտան,
Ա՛յդ էակին զեղեցիկ փառքն երկնաման.
Մի՞թէ երկրի Մեծութիւններն վաղեմի,
Կնոջ ծոցէն չե՞ն երկնուած՝ մօտ վէմի
Ուր՝ հուսկ ապա կը թաղէ զայնս ժամանակ,
Հեզնելով մարդն իր դրախտին բովանդակ,
Գոգցե՛ս Ոչինչն դամբարանէն զուրս փախչի,
Ու մըռնչէ Գաղափարին՝ Արարչի,
«Դանդի՛ւն ես դու» կը խուսափի լոյսի պէս,
Զոր վերջալոյսն աեղայ զուխէն՝ բոցագէս:
Անտառի կիսներն կնոջ փառքին թէն է հուր,
Բաղաքի կիսներն անոր պերճանքն ու սարսուռ...
Անմեղութիւն մայրիներուն տակ ծընաւ,
Իսկ զըղեակին մէջ թաղեց զայն փառքն կանխաւ.
Ապարանքնոր եղան անոր դամբարան,
Ազամաններն անոր արտօսըն յաւիտեան.
Երբ եւ այսօր տեսնեմ ոսկի կամ գոհար,
Անոնց մէջէն նշմարեմ Հէքն՝ ճշմարտին մայր.
Ո՛հ, կուռքերու սին փառքերէն կը տեսնեմ,
Անմեղութեան դալար դափնին՝ ինձ վըսեմ.
Մեծ շէնքերու աղիւսներն այն պատմաշունչ,
Կընոջ սըրտին կախարդանքը տեսնեմ մունջ.
Բագիններու, տաճարներու սիւներէն,
Անոր հոգւոյն խոյանքն նշմարեմ ապարէն.
Նիւսի վե՛հ ու բրդական ափերէն,
Սիրոյ ըստուերին Պետութիւնը կը զիտեն.
Երկրի փառքն՝ հըրդեհներն կենդանի,
Կարծե՛ս երգ մ'են՝ ծնած փառքէն իր մարմնի.
Եւ զեւ կինը զեւ թագուհին է երկրի.
Ի՛ր փառքերուն վըրայ անդու կը բերկրի:

(Շար.)

ՄԻՀՐԱՆ ԹԱՊԱԳԵԱՆ

Գ Ի Տ Ա Կ Ա Ն

Չ Գ Ա Յ Ն Ի Կ Ը

Տունկ մը որ կ'զգայ, կը ֆնանայ, կ'արքնայ,
կ'զգաձուլի նեանամ աղջկան մը պէս

Հրաշագեղ ու նազելի բնիկն է այն Հա-
րաւ. Ափրիկէի ծաղկաւէտ դաշտերուն, ուր
խուժած են Հնդկաստանի զառամ կատարի-
նէին Պրէտորեան Լէգէոնները, եւ ցօղի,
անձրեւի ու առուակներու ոռոգումին տեղ
ճապաղիքներով ու նախճիրներով կ'ողողեն
զանոնք: Պօէրուհեաց սիրական թփիկն է
այն, սիրտի մը, ջիղի մը պէս դիւրազգած:
Կը կոչուի նաև Momiso pudica, այսինքն
Ամորիեաց հսպիսունին Պօէրական դրախ-
տին, զոր հիմա կը քարուքանդեն բրիտանա-
կան փաղանգներ, ճիշտ ինչպէս երբեմն ալ
Հռոմէական Պրետորները քարուքանդեցին
Կարթէճոնի Փիւնիկուհեաց բուրաստաննե-
րը, որ մը անոնց հիմնայատակ փատա-
կաց վրայ ձեռքն ի ծնօտ կողողազին ող-
բալու համար, հեռուէն դիտելով աւերումն
իրենց յաւիտենական քաղաքին ալ որ աղագաց
ու ժողովրդոց գանձատունն ու պատգամա-
տունն էր, այլ սակայն անոնց անիծից ու
վրիժուց աւար ու պաշար ինկաւ:

Զգայնիկը (La sensitive) 60—70 սան-
դիմէդր բարձր սիրուն ու գեղեցիկ թփիկ
մ'է, եւ ասեղի ծայրերու պէս սուր փու-
շերով սպառազէն են իր ցօղուններ, Ա-
գասիայի ցեղէն է. անոր պէս փափուկ ու
չքեղ բարդ-տերեւիկներով շարուած. իր
ծաղիկներ կարմիր կամ բաց կապոյտ գոյնե-
րով կը փալփալան: Զգայնիկ անուամբ մկր-
տած է դայն Լիննէ, այն չնայսարհիկ յատ-
կութեան համար որով ամենաթեթեւ հպումէ
մը կ'զգաձուլի: Ասեղի, մագի կամ մատի
կամ շիւղի ծայրով դպա՞ր մի, իսկոյն իր
յօդաւոր ոտիկները կը կծկին, իրենց ցօ-
ղունին կը կպչին եւ բոլոր թերթիկները ի-
րարու վրայ նուազածի պէս կը պառկին,
կարծես խորչելով, խրտչելով իրենց դպող,
չիռող առարկայէն, կը հեռանան անկէ առ
ամօթխածութեան: Այս զգայական շար-
ժումները կը կատարուին ճիշտ այն կէտին
մէջ՝ ուր ծաղիկին բերդը միացած է ոտին
հետ եւ թերթերն ալ բերդին հետ: Ասոնց
իրարու հետ կամ իրարու մէջ տեղաւորուած

իւրաքանչիւր կէտերուն մէջ շատ փոքր
գեղձ մը կայ, որ ամենէն աւելի դիւրագր-
դիւ կեդրոնն է: Բաւական է գնդասեղի մը
ծայրով անոր դպիլ, իսկոյն տերեւները կամ
թերթերը կը քաշուին, կը գոցուին:

Զգայնիկը մին է այն տունկերէն որոնց
քով տեսակ մը քնանալու երեւոյթ տեսած
են բուսաբանք: Իրիկուան դէմ, կամ նոյն
իսկ երբ երկինքը կ'ամպամածի, նա կը
կծկէ իր ոտները, տերեւները, եւ կարծես
թէ ընդարմացած՝ քուն կ'իյնայ կամ կը քա-
չէ. առաւօտուն լոյսը ծագածին պէս կ'ար-
թնայ ու կը բացուի. իր ծաղիկն թերթերն
ամբողջ չեն բացուիր մինչեւ որ լոյսն ուղ-
ղակի անոնց վրայ չցայտէ: Ամպ մը բա-
ւական է լոյսին ուղղութիւնը փոխելու եւ
մեր Զգայնիկը տխրեցնելու: Յաջողեցան
Զգայնիկին քնանալու ժամերը փոխել. օրն
ի բուն քնացուցին եւ գիշերն ալ անքուն
հսկել տուին, առտունէ սկսեալ դնելով
զայն մութ սենեակի մը մէջ եւ գիշերը տա-
նելով չափազանց լուսաւորուած սրահիմը մէջ:

Թուր քաղաքէն Տքթ. Պրըթօն իր շատ
մը փորձերով հաստատեց թէ Զգայնիկն ալ
կենդանեաց պէս իր զգայնութիւնը կը կոր-
սնցնէր furore մի ազդեցութեան տակ:
Տոքթ. Լըզլէրք ալ յաջողեցաւ լաւատն-
մով թմրեցնել ու քնացնել զայն: Զգայնիկը
չափազանց յանդարձական շարժումներէ
կ'առնուի, կը վիրաւորուի. օրինակի համար
սալայատակին վրայ թաւալող կառքին աղ-
մուկներէն. սակայն կը վարժուի երբ յա-
ճախակի պատահին: Մինչեւ հիմայ ան-
գուտ ու ապարդիւն միացին այս եղական
տունկին երեւոյթները բացատրելու, հաս-
կնալու համար եղած բոլոր ջանքերը: Շատ
գիտուններ ենթադրած են թէ ինչ ինչ
բոյսեր, կենդանեաց նման, ջղային դու-
թեամբ մը եւ ճշմարիտ զգայնութեամբ օժ-
տուած են: Զգայնիկը թէեւ Հարաւ. Ափրի-
կէի տաքուկ կլիմային բնակիչն է, սակայն
Եւրոպիոյ մէջ ալ մշակեցին զայն ձմերոց-
ներու մէջ: Մեծ զգուշութեամբ կը սերմա-
նեն զայն, ամէն մէկ թաղարի մէջ մէկ հատ
կուտ կը տնկեն, որպէս զի հանելու կամ
տեղափոխելու հարկ չըլլայ վերջը:

Զգայնիկը զգայնութեան եւ ամօթխա-
ծութեան խորհրդանշանն է: Տըլիլ ըսած է.
«Ո՞վ չի գտներ կոյս մը երկշոտ այս փափուկ
ու դորովալի Զգայնիկին մէջ, որ կ'բերով
մեր ձեռաց տակ իր խայտոտ տերեւը, ա-
նուշակ անբծութեան խորհրդանշան պատկերը
կ'ընծայէ»:



ԱՄՈՒՍՆԱԼՈՅԾՆ ԱՊԵՐՋԱՆԻԿ

ԳԻՒՂԱՎԷՊ

Մասն Ա.

ԽՈՍՏՈՒԼԱՆԱՏԱՆ ՄԵՋ

Քառանգան. — Լսէ՛, զաւակս, և քեզ հետ թող լսեն բոլոր քեզ նմանները, բոլոր ներկայ եւ ապագայ Հայերը, արու թէ էգ, որք պիտի ամուսնանան, կամ արդէն ամուսնացած են եւ զաւակ ունին կամ պիտի ունենան, նշանելիք կամ կարգելիք մանչ ու աղջիկ զաւակներ: Դո՛ւն, սիրելիս, ինձ՝ խոստովանաւորդ՝ դիմած ես և կը պահանջես որ լուծեմ ամուսնութիւնդ ու նորէն քեզ պսակեմ ուրիշ աղջկան մը հետ, այսինքն կրկնամուսնութիւնն ընդունել տամ Ազգիս Գիտե՞ս, ի՞նչ աղգակործան, կրօնութեան, տնաքանդ, ընտանիքի դոյութիւնն ու չարունակութիւնը ջնջող, սպաննող հետեւանքներ պիտի ունենայ այն: Քեզ նոր աղջիկ մ'ալ կին տալու համար՝ ուրիշ աղջիկ մը պիտի անպատուեմ իր բոլոր ցեղին ու կրօնքին հետ: Պատուած աղջիկ մը անպատուել՝ մօրդ, քրոջդ, կնոջդ ու ազգին բոլոր մայրերուն ու քոյրերուն սեռն անպատուել է, ինչ որ անքաւելի եղեռնագործութիւն մ'է, թէ՛ Աստուծոյ, թէ՛ խղճի, թէ՛ կրօնքի, թէ՛ օրէնքի, թէ՛ մարդկութեան առջեւ: Դուն կ'ըսես թէ կին առած աղջիկդ անբիծ է. այդ մեզ համար անծանօթ է: Եւ ինչէ՞ն գիտնանք թէ այդ անծանօթ Գին ծանօթ եզրը դուն չես. եւ մօրմօնի մը անունը չառնելու համար, ուրիշ աղջիկ մ'ալ կին առնելու պատրուակ մը չէ այդ ըրածդ: Եւ եթէ ուրիշ աղջիկ մ'ալ առնելու ըլլաս, թէեւ ըստ իս անկարելի և անհաւանելի, ինչէ՞ն կրնանք ապահով ըլլալ թէ նոյն առարկութիւնը պիտի չընես երրորդ աղջիկ մ'ալ գլխէ հանելու համար: Կ'առարկես թէ կինս անբիծ չէր, դուն անբիծ էիր: Կոյս ընդ կուսի, կ'ըսէ Եկեղեցին: Նախ որ դուն այրի մ'էիր, աղջիկ մը, կին մը

առած էիր, որ մեռեր է: Այրի ընդ այրւոյ ամուսնացած համարէ ինքզինքդ: Ինչո՞ւ ձեր անբծութեան մասին այնքան չէ՛ք նախանձախնդիր, եւ խեղճ օրիորդաց անբծութեան վրայ կը ծանրանաք: Դուք, տաք գլուխ եւ իբր բարձրագոյն կրթութիւն առած երիտասարդներ, ձեր կուսութիւնը կ'եղծանէք հանրատուներու մէջ, ուր հազարումէկ մոլութիւններով ու անտեղծ վարակուած և յաճախ պորտէ պորտ փոխանցիկ ու ժառանգական խօթութիւններով մալակոնուած անմեղ աղջիկ մը կին կ'առնէք և անոր կուսական պատիւը կը խծքծէք. ո՞գիտէ, քանի՛ կուսական պատիւներու հետ ամենայն լարշառք խաղալէ վերջ, յաճախ ալ հանրուհիէ մը աւելի, աղիճուկ աղջիկէ մ'աւելի՝ Սողոմի, Գոմորի զաւկի մը պէս լլկուած: Ձեր աչքին գերանը կը թողուք, և ձեր դիմացինին աչքին չիւզը կը փնտռէք:

Տէր Տաթեւի այս խօսքերը հրաչէկ շամփուրի մը պէս խրուեցան Թադոյի կուրծքը, տաղեցին խիղճը, խարանեցին հոգին: Ինքն իր վրայ փլածի պէս, լեզուն ու կիմքը կցուած, սառուցեալ, պակուցեալ պապանձումէ մը յետոյ, կիրքն ու նախատուած արժանապատուութեան զգացումը նորէն կ'ըմբոստանան իր մէջ, կը պոռթկայ իր բարկածայթ սա խօսքերը:

— Տէ՛ր Հայր, Աստուած ալ երկինքէն իջնէ, Յիսուսն ալ խաչէն, եթէ բոլոր մարգարէները, տաքեալները, բոլոր Հայրապետներն ալ իրենց գերեզմաններէն յառնեն, եւ իրենց կտակարաններով, Աւետարաններով, գրքերովն ու կանոններովն ինձ դէմ սպառնան ալ, զիս օրէնքին բանտը եւ կրօնքին դժոխքը նետեն իսկ, եւ պսակս անլուծելի հռչակեն, ես ինքզինքս այս կնոջմէն լուծեալ կը յայտարարեմ: Աղջիկ մը՝ որ թէ՛ Աստուծոյ, թէ՛ բնութենէն, թէ՛ ծնողքէն եւ թէ՛ կրօնքէն, օրէնքին, ընկերութեան ու բարոյականի կողմանէ ցհարսնութիւն անձեռնմխելի, անեղծ ու անտխեղծ պահուիլն իրեն հրամայուած, պատուիրուած աւանդը խարդախել, չարաչար գործածեր է, ինձ կին ըլլալու արժանի չէ: Ամուսնութեան մէջ բացարձակ

հաւատարմութեան, բացարձակ վստահութեան եւ անքակտելի միութեան միակ կապ եղող խորհրդանշանն երբ ո՛չ եւս է, ամուսնական կեանքն այլեւս կը դառնայ ատաղձները զիրար կցող, գամող հեղոյսները հանուած, զիրար զանգող շաղաղները տարալուծուած, մղել ու մոխիր դարձած չէնք մը, զոր քակել, քրքրել ու անոր տեղ նոր մը կառուցանել հարկ անհրաժեշտ է։ Կար, կարկտան չի վերցնել այլեւս ան։ Կուսութեան բացակայութիւնը ներկայութիւնն է պոռնկութեան։ Բան մը՝ որոյ համար մեր կրօնքին ու հաւատքին հեղինակ Աստուածն ալ, Յիսուսն ալ բացարձակ արձակում պատուիրեցին, եւ արձակելոյն ձեռքը ապահարկանի գիր տալը օրէնքի կարգ անցուցին։ Դուք Յիսուսի աշակերտն էք, եւ Յիսուս ինքն էր որ ըսաւ. «Ո՛չ է աշակերտ առաւել քան զվարդապետ իւր»։ Խնդիր մը զոր Յիսուս ինք լուծելի կը հռչակէ, դուք ի՞նչ պէս կրնաք անլուծելի հռչակել։ Քրիստոնեայն Քրիստոսի հետեւող մ'է։ Քրիստոսի շաղէն ծռողը անցի-Քրիստոսն է, զոր նզովելու համար պաշտօն առած էք եւ ոչ թէ զայն պաշտելու։ Յանուն Յիսուսի՝ որուն փոխանորդն էք դուք հոս, կը խընդրեմ որ անմիջապէս ապահարկանի գիրն ստորագրէք եւ յանձնէք ինձ։

Հազիւ զայրալիրն թաղօ արտասանած էր իր վերջին բառը, և ահա եկեղեցական աճապարանօք խոստովանատան դուռը զարկաւ։

Տէր Տաթեւ, որ թաղոյի բարկացայտ խօսքերէն երկու սուրի մէջ մնացած՝ ճմաթկուած միտք մը դարձած էր, ինչ ըսելիքին եւ ընելիքին թելն ալ կորսնցուցած, իր երկսայրի ու տաղնասլալի դիրքէն ինքզինքը առժամայն ճողոպրելու քաջադէս պատեհ մը համարեց դրան բաղխիւնը, ցատկեց տեղէն ու իսկոյն դուռը կռնակին վրայ հրեց բացաւ, բարկութենէն ճաթելու չափ ուռած սիրտը եւ համբերութենէն խղդուելու չափ կծկուած թոքերը նոր օդափոխութեամբ մը գէթ պահ մը զովացնելու համար, եւ նաեւ հնաք մը գտնելու, թաթօն համողելու, կարկելու համար։

Տ. Տաթեւի ոտքերը գետնէն կտրեցան

ուրախութենէն, իսկ թաթոյինը գետին գամուեցան սրտմտութենէն, երբ տեսան որ Ս. Առաջնորդն եւ տեղւոյն եկեղեցւոյ իշխաններն էին եկողները, որք լսելով հասարակաց գայթակղութիւն պատճառող պատահարը՝ փութացեր էին, Մանուչակի ընտանեաց յորդորանօքն ա՛լ աւելի յուզուած, խոստովանատունը հաշտարար դատարանի մը վերածելու եւ թաղօն Մանուչակի հետ հաշտեցնելու նպատակաւ, սակայն իբրեւ պատահական ուխտաւորներ կեղծեցին իրենք զիրենք նոյն պահուն։

(Շարունակելի)

Յաջորդ թուով պիտի հրատարակենք մեր համակրելի աշխատակից Թէոդիկ Լապճինճեանի մէկ սիրուն գրուածը, Ալէմտաղիէ արձագանգուած։

Տպագրական Տեսչութեան բարձրագոյն պաշտօնատարներէն Վսեմ. Պօղոս Էֆ. Պառնասեան նոր կորուստ մը ունեցաւ յանձին իր սիրելի մօր, այրի Տիկին Հռիփսիմէ Պառնասեանի։ Մեր խորին վշտակցութիւնը յայտնելով իրեն եւ իր պարագայից, երկնից մխիթարութիւնը կը մաղթենք։

Հրատարակութիւն Բիւզանդ Մ. Պօղոսեանի

Դ.ՊՐՈՑԵՍԱՆ ԳՐԻՔԵՐ

1. Տեո. եւ Գործնական Բերականութիւն աշխարհիկ լեզուի, տարրական ընթացք 80 էրէս 2 շրշ.
2. Տեո. եւ Գործ. Բեբականութիւն սշխարհիկ լեզուի, միջին եւ բարձրագոյն ընթացք, 208 էրէս 4 »
3. Ֆրանս. նոր քերական 1 կէս »
4. Բերականութիւն Ֆրանս լեզուի 7 »
5. Էքօ տը Բառի [200 էրէս բառարանով] 10 »
6. Գրական Բառգրքոյկ Ֆրանսասայ 5 »
7. Պատկերազարդ աշխարհագրութիւն 4 »
8. Ողմոս խոշորագիր, կիսակաշի [անդէշ] 2 կէս
9. Ինքնագաշտպանութիւն գիշական, դաղդիական եւ միզանքաբորբոքային ախտերու դէմ 8 շրշ.
10. Օւմ. Բաղ. Օրինագիրք 5 հատոր 50 »

Ձեղձ 300⁰

Այս բոլոր գրքերուն համար դիմել Հանրագիտակի ՏԵՐԿԵՆՈՒԹԵԱՆ։

Արտօմսք. — ԱՐՄԵՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ

ԳՐՊԱՆԻ ԲԱՌԳՐՔՈՅԿ

ՖՐԱՆՍԱՀԱՅ

Գին 5 Ղրուս


800 փոքրագիր երեսներէ բաղկացած սիրուն գրքոյկ մը, որ 13—14,000 բառերու ու ներու եւ ընտանեկան ասացուածներու հաւաքոյթ մ'է եւ ֆրանսերէն ուսանողներու անբաժան ընկերը: Գնեցե՛ք մէկ մէկ օրինակ եւ ձեր զաւկին ձեռքը տուէ՛ք, վստահ ըլլալով որ այդ գրքոյկ պիտի սրէ անոր ուսման փափաքը: 10 օրինակ մէկէն առնողին 30 առ 100 գեղջ: Դիմեցե՛ք միայն Հանրագիտակի սնօրեմութեան:

ՆԻՈՒ ՀՈՄ

ԱՄԵՐԻԿԵԱՆ ՄԻԱԿ ԿԱՐԻ ՄԵՔԵՆԱՆ

Բալի

Ուշադրութիւն



Որ կը մըցի բոլոր կարի մեքանիզմներուն հետ

Իր պարզութեամբ

Տոկունութեամբ

Արագութեամբ

Թեթեւութեամբ

Աժանութեամբ

Թուրքիոյ միակ ներկայացուցիչ
ՅՈՎՀ. Կ. ՄԻԱՆԵԱՆ

Կեդրոնացեղի. — Սիրքէճի, Բէօքրէ-լի խան, թիւ 3:

Մասնաճիւղ. — Ղալաթիա, Պէօլիւք Միլ-լէթ խան, թիւ 33:

Գնողներու համար վճարման ամէն տեսակ դիւրութիւններ:

ԱՌԵԻՂԱԿԱՆ ՄԵԾ ՏՈՒՆ ԹԷՅԻ



Կ. ԵՆՎՐՈՒԵԱՆ

Վ. ԻՍԱԳՈՒԼԵԱՆ

ՄԵՄԲՐԱՆԱԿ ՀՈՒ ՄԹԵՐՔ

գերընտիր եւ ամէն ճաշակի յարմար

Որոշ եւ չափաւոր գին

Պահճէ գաբու, չէլայ պէյ խանի տակ

Թէ՛ Պոլսոյ եւ թէ՛ գաւառի մեր պատուարժան ընթերցողներուն կը յանձնարարենք սոյն վստահելի վաճառատունն, որ երկար տարիներէ ի վեր պատուաւոր դիրք մը գրաւած է, եւ ամէն տարի չի զլանար իր թէյի նուէրը՝ ի նպաստ կարօտելոց:

Վստահարար դիմեցէ՛ք եւ պիտի չզրզջաք: — Վաճառատան մարգային ուշ դրէ՛ք:

ԿԱՌԵԻՈՐ ԱԶԴ. — Հանրագիտակի կողքին երեք էջերը ծանուցմանց յատկացուած են: Անոնք որ կը հաճին մէկ տարեկան բաժանորդագրուիլ, կրնան իրենց ծանուցումները ԶՐԻ հրատարակել տալ, 10 ական տող, 5 անգամուան համար. իսկ 50 տող մէկ անգամուան համար:

Բաժանորդագրութիւնք կ'ընդունուին, եռամսեայ, վեցամսեայ եւ տարեկան:

ԻՍԹԸՐՆԳԱՌԻՆԹԻՍ

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ընդդեմ հրդեհի ի «ՀԸԼԼ»

ԴՐԱՄԱԳԼՈՒԽ Ֆր. 7,250,000

ԱԼԼԷԱՆՁԱ

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Կենաց եւ արկածից ի «ՃԵՆՈՎԱ»

ԴՐԱՄԱԳԼՈՒԽ Ֆր. 87,455,645

Ընկերութեանց Դրամայնունն է «Քրէտի Լիօնէ»,

ՌԵՆԱՆ-ՎԵՍԹՅԱԼԻԷՆ

ԾՈՎԱՅԻՆ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ Ի Կլապալա

Դրամագլուխ եւ Պահեստ Ֆր. 6,250,000

ԳՐԱՍԵՆԵԱԿ.— Ստամպուլ, Հաճօրուլօ Խան, թիւ 53, 54, 55, 56

Լիազօր Ներկայացուցիչ

Գ. ՖԵՐԱՏԵԱՆ



ՌՕՍԻԱ — ROSSIA



ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀՐԴԵՔԸ, ԿԵԱՆՔ, ՓՈԽԱԴՐՈՒԹԻՒՆՔ, ԱՐԿԱԾՔ

1908 տարւոյ մէջ գանձուած ապահովագրին

34,775,642 ֆրանք

չխաւորութեան գումար

121,765,333 »

31էն ի վեր ապահովագրեալներուն վճարուած

164,172,000 »

Կեդրոնացեղի, Քարափին վրայ, Մաքսան հին տեղը

Ընդհ. Բննիչ

Ա. ՀԻՐԱՄԻԻՋ

Ընդհ. Դործակալ

ԹԷՈՏՈՐ ՌԷԲՐԷՆ

ՄԵՐ ՀԱՍՑԷՆ

Հանրագիտակի վերաբերեալ ամէն գրութիւն պէտք է ուղղել Նսան Պերպլերեան
սպարանը, Էսփի զապրիյէ ճասէսի թիւ 61, առ Տնօրէնութիւն
եւ հմբագրութիւն «Հանրագիտակի»